

Կարապետ Հակոբյան

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի հայցորդ

ՀՅԴ ԿԱՐՍԻ ՈՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՆՔ ՈՒ ԶԻՆԱՍԹԵՐՔ ՀԱՅԹԱՅԹԵԼՈՒ ԵՎ ԵՐԿԻՐ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ (1892-1908 ԹԹ.)

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ռուսաստանին անցած Կարսի սանջակից, Չլդրի սանջակի մեծ մասից և Բասենի սանջակի մի փոքր մասից ստեղծվեց վարչական մի միավոր՝ Կարսի մարզ անվանումով:

Շնորհիվ իր աշխարհագրական նպաստավոր դիրքի Կարսը և նրա հարակից շրջանները առանձնահատուկ նշանակություն են ստանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին ծավալված հայ ազատագրական զինյալ պայքարում: Կարսի մարզը ոչ միայն Երկիր մեկնող մարտական ու զինատար խմբերի գլխավոր խարիսխներից մեկն էր, այլև Հ. Յ. դաշնակցության այն կարևոր դարբնոցը, որտեղ իրենց մկրտությունն են ստացել ազատագրական պայքարի շատ նշանավոր գործիչներ: Կարսի մարզի յուրահատուկ դերի հստակ բնութագրումը տրված է Ռուբենի ստորև բերվող տողերում. «Կարսը իր շրջաններով նստած էր Երկիր տանող ճանապարհներում վրայ: Անոր փեշերում տակեն էր, որ կարելի էր գնալ Բագրեւանդ, Էրզրումի շրջանները, Խնուս եւ Ախլաթ, Հարք եւ Ապահունիք, հեռաւոր Քաջբերունիք եւ Տնորիք, Վարդո, Տարօն եւ լեռներու մէջ կորած Սասնոյ աշխարհը: Կարսը հիւսիսային եւ հարաւային Հայաստանի օղակն ու բանալին էր եւ իբրեւ կայան կը խարսխէր եւ ամէն ինչով կ'օժանդակէր բոլոր այն անհատներու, որոնք մէկ կողմէն միւս կողմը կ'անցնէին՝ ազատութիւնը կերտելու նպատակով»¹:

Նման իրավիճակում 1891-1892 թթ. Կարսի մարզում լայն տարածում էր ստանում զենքի փոխադրման գործը դեպի սահմանամերձ գյուղեր, որտեղից այն ուղարկվում էր Երկիր: ՀՅԴ-ն Կարսի մարզում և մյուս սահմանամերձ շրջաններում ստեղծվել էին զենքի և զինամթերքի ձեռք բերման ու կուտակման գործով զբաղվող հատուկ խմբեր, որոնց գործունեությունը կրում էր գաղտնի բնույթ: 1890-ական թթ. սկզբին զենք տեղափոխող գործիչների ընդարձակ ցանց է ձևավորվում Ալեքսանդրապոլում ու շրջակա գյուղերում: Այդ բնագավառում մասնագիտացված հայդուկների (Արամայիս Ազնավուրյան, Ուսուլ Գրիգոր (Դուրգարյան), Վռան Նալչաջյան և այլոք) ձեռք բերած զենքն ու զինամթերքը ֆայտոնչի Վարոսի, ըթրեցի Տիգրանի և այլոց փոխադրամիջոցներով տեղափոխվում ու թաքցվում էր սահմանամերձ գյուղերի զինապահեստներում: Վերջիններիս վերահսկողությունը իրականացնում էին Սողոթլու (Սառնաղբյուր) գյուղի քահանա տեր Մեսրոպ Բաղդյանը, տանուտեր Տանո Ներսիսյանը, Մաստարայի բնակիչ Հարություն Էլոյանը, Ղոնաղառն գյուղացի Մարտիրոս և ուրիշներ: Նման գործիչներ կային նաև Կարսում, Իգդիրում, Երևանում: 1893 թ. ՀՅԴ-ն զինապահեստներ ուներ նաև Կարսում, Արդահանում և այլ վայրերում՝ փաստորեն ռուս-թուրքական սահմանի գրեթե ողջ երկայնքով: Ձևավորվել էին նաև

¹ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա. հատ., Երեւան, «Աղանա» հրատ., 1990, էջ 124-125:
108

սահմանամերձ գյուղերում բնակվող անձնվեր գործիչների խմբեր՝ Վերին Բասենի, Իգդիրի և այլն¹: Այնուհետև «Ձենքը իբր առետրական ապրանք սահմանէն կ'անցուէր եւ պայմանաւորուած մարդկանց միջոցով իր նպատակին կ'երթար»², - գրում է Ռուբենը: Սակայն զենքը Երկիր փոխադրելու այս միջոցը շուտով իսպառ վերացավ՝ սահմանների վրա հսկողության ուժեղացման և «թիւրք եւ ռուս համաձայնութեամբ հայերու առետուրը երկու կողմերու վրայ արգելելու» պատճառով: Այնուհետև սահմանամերձ շրջանից զենքը Երկիր հասցնելու համար մնում էր միայն մեկ միջոց. «զիշեր ժամանակ սահմանապահ երկու զօրքերէն փուսափիլ եւ փոքր կամ մեծ զինատար խումբեր կազմակերպել եւ զենքերը Երկիր անցկացնիլ»³:

Չուզահեռ միջոցներ էին ձեռնարկվում ոչ միայն Ռուսաստանից՝ Տուլայից, «Նադեժդա» ընկերության միջոցով զենք ներկրելու, այլև Անդրկովկասում առկա ռուսական զինապահեստների պարունակությունը «շոշափելու» համար: Այդ բնագավառում ևս առավել հաջողակը Ալեքսանդրապոլի դաշնակցականներն էին՝ հնարամիտ Ավետիս Ղարիբյանի (Պաղվալի Վաղո) գլխավորությամբ: Չնայած ցարական ոստիկանության հետապնդումներին ու բազմաթիվ հետաքննություններին՝ վերջինս այնքան ընդլայնեց իր ընդհատակյա եռանդուն գործունեությունը, որ արդեն 1894 թ. օգոստոսի վերջին Ուսուլ Գաբրիելի, Ուսուլ Գրիգորի և Վահան Ջալալյանի հետ կարողացավ կազմակերպել Ալեքսանդրապոլի բերդի զինապահեստների առաջին «մաքրազարդումը» (300-ից ավելի հրացան և մեծ քանակությամբ փամփուշտներ): Գործը գլուխ բերելու համար Ալեքսպոլի կոմիտեի վարչությունը (Ավետիք Մելոյան, Գաբրիել ժամհարյան, Թադևոս Խզմալյան, Ալեքսանդր Քուլալյան, Գևորգ Յալաճյան) կազմում է զենքերը զորանոցից դուրս բերելու ծրագիր: Պաղվալի Վաղոն զինվորներից ճշտում է բոլոր անհրաժեշտ տվյալները, առանձնացվում է սկզբում 1, հետո ևս 2 կառք: Գործի են լծվում ՅՅԴ Ալեքսանդրապոլի կառույցի բոլոր անդամները՝ իբրև հսկիչ, փոխադրող, կապ պահող, զինապահեստ մտնող: Գալիս է նշանակված օրը. «Պահակները բաց արին պահեստի կնքած դռները եւ 2-3 ժամում մոտ 100 արկը բերդանի փամփուշտներ բարձեցին մեր ֆուրգոնները»⁴, - հիշում է Ա. Ազնավուրյանը: Այնուհետև ձիակառքերով զենքն ու զինամթերքը փոխադրվում է Ալեքսանդրապոլի Ղոնաղռան գյուղն ու տեղավորվում դաշնակցական Մարտիկի տան մեջ պատրաստված պահեստում: Նույն գործողությունը կատարվում է հաջորդ օրը: Ալեքսանդրապոլի զինապահեստից հանած փամփուշտների ընդհանուր թիվը մոտ 60.000 էր⁵: Ձեռք բերված զինամթերքն այնքան է շատանում, որ Ալեքսանդրապոլի ՅՅԴ կոմիտեն ստեղծում է ևս երկու մեծ պահեստ՝ այս ճանապարհով ձեռքբերված զենքն ու զինամթերքը տեղավորելու համար: Ձեռքի ու զինամթերքի ձեռք բերման գործին իրենց մասնակցությունն էին բերում նաև Կարսի շրջանի գործիչները:

1895 թ. Կարս անցած Յրայրը նոր ուղիներ էր որոնում Երկրին օգնելու համար: Նա մշակում է Երկիր զենք փոխադրելու նոր ձև: Յրայրի ծրագիրը հետևյալն էր՝ Կարսի տեղական ուժերը մարզի սահմանամերձ շրջաններում նախապես պայմա-

¹ **Խուղինյան Գ.**, Գ. Յ. Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թ. վերջը), Երևան, 2006, էջ 276–277:

² **Ռուբեն**, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 127:

³ Նույն տեղում:

⁴ **Արամյախ Ազնավուրեանի** յուշերը, գրի առաւ Ե. Յայրապետեան, «Յայրենիք» ամսագիր, Բոստոն, յուլիս, 1937, թիւ 9, էջ 150:

⁵ Տե՛ս նույն տեղում:

նավորված վայրերում պետք է ռազմամթերք ու զենք թաքցնեին և հեռանային, իսկ գյուղացիների անվան տակ թուրքական Բասենից ռուս-թուրքական սահմանն անցած խմբերն այդ զենքերը գիշերով պետք է փոխադրեին Արևմտյան Հայաստանի հայկական գյուղերը¹: Այս ծրագիրը սկզբնական շրջանում արդյունավետ էր: Դրա շնորհիվ 1895-1896 թթ. մեծ քանակությամբ զենք ու զինամթերք է փոխադրվում թուրքական Բասեն, որտեղից անհամեմատ հեշտ էր այն Երկրի այլ վայրեր փոխադրելը: Այնուհետև Հրայրը ծրագրում է իր խմբով անցնել սահմանը, զինվել արդեն թուրքական Բասեն փոխադրված զենքով «եւ սկսել այս կամ այն գործը Երկրում կազմած այս կամ այն ծրագրով»²:

1895 թ. Կարսից Երկիր անցնելու պատրաստություն են տեսնում խլաթցի Սերոբ Վարդանյանի (Աղբյուր Սերոբ) և Հրայր-Դժոխքի (Արմենակ Ղազարյան) խմբերը: Այս խմբերի զենքն ու զինամթերքը Կարսի շրջանի սահմանամերձ գյուղեր փոխադրելու գործը հանձնարարվում է Արամայիս Ազնավուրյանին, որը օգնականներ ունենալով ղոնաղաճանցի Մարտիկին, Ուսուլ Գրիգորին և Վռամ Նալչաջյանին, զենքը Ալեքսանդրապոլից Մարտիկի կառքով նախ փոխադրում է Կարսի շրջանի Բերնա, այնուհետև՝ Դորբոնդլու գյուղերը, որտեղից այն 20 ձիերով փոխադրում է Հոխվերան, Ղոջաքիլիսա, այնուհետև՝ Արաքսի վրայով Բաշ գյուղ³: Այս ճանապարհով մինչև 1895 թ. հունիս ամիսը սահմանագլուխ է հասցվում 100-ից ավելի հրացան՝ իրենց բոլոր պարագաներով և բավարար քանակությամբ փամփուշտ⁴:

1895 թ. ընթացքում Կարսի մարզից Երկիր են անցնում Աղբյուր Սերոբի, Հրայր-Դժոխքի, Աբրոյի (Մկրտիչ Սահակյան), Տուրբախի (Հարություն Կիրակոսյան) և Ջալաղի (Երվանդ Բաբերյան) խմբերը, որոնց հաջողվում է անվտանգ հասնել Բասեն, Ախլաթ, Խնուս, Մուշ և Սասուն՝ ձեռնամուխ լինելով տեղի հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Համիդյան ջարդերի օրերին կրկին հրատապ է դառնում Երկիր զենք ու զինամթերք փոխադրելու խնդիրը: Այս մասին ՀՀԴ հիմնադիր-անդամ Սիմոն Ջավարյանը «Դրոշակ»-ի խմբագրությանն ուղղված 1895 թ. նոյեմբերի վերջի թվակիր նամակում գրում է. «Ամեն տեղից օգնութիւն են խնդրում... նրանց (արևմտահայերի - Կ. Հ.) յոյսերը միայն ռուսաստանցի հայերի վրայ է»⁵: Ելնելով դրանից, նա առաջարկում է. «Եթէ հաջողուեց մի 100-200 հոգի անցկացնել, մանաւանդ փորձուած զինուորներ, դա կ'ունենայ ահագին նշանակութիւն: Եթէ դրանք անցածների հետ միասան ու կեդրոնանան մի տեղ՝ կարող են առաջ բերել երկրորդ փոքրիկ Ջէթուն, որը ահագին նշանակութիւն կ'ունենայ (հայկական - Կ. Հ.) հարցի լուծման համար...»⁶: Միաժամանակ նշվում է Կարսի շրջանում զենքի խիստ պակասի մասին. «Հրացանի հարցը ամենակարեւոր հարցն է հիմա: Մենք ունինք պատրաստ 30 հատ եւ շուտով կը լինի էլի մօտ 50 (հրացան - Կ. Հ.): Եթէ դրանք հասան սահմանը, այս-այն տեղ առնելիքների հետ բաւականին լավ բան կ'լինի»¹: Ս. Ջավարյանի այս ծրագիրն իրագործել

¹ Տե՛ս **Ռուբեն**, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 129-130:

² Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, յաւելւած «Հայրենիք» ամսագրի, Ա. հատ., կազմեց՝ Ս. Վրացեան, Պոսքըն, 1934, էջ 183:

³ Տե՛ս **Ա. Ազնավուրեանի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, հոկտեմբեր, 1937, թիւ 12, էջ 126-128:

⁴ Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 180:

⁵ **Սիմոն Ջավարեան**, (մահուան եօթանասունամեակին առթիւ), խմբ. Հր. Տասնապետեանի, Բ. հատ., Պէյրուք, 1992, էջ 59, նաև Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 217:

⁶ Նույն տեղում:

¹ Նույն տեղում:

չի հաջողվում, քանի որ ցարական ժանդարմերիան սահմանամերձ շրջաններում սաստկացնում է խստությունները, նույնիսկ գյուղերում խուզարկություններ են կատարվում, որոնց ժամանակ լինում են նաև ձերբակալվածներ¹:

1896-1897 թթ. ՀՀԴ Կարսի «Ջրաբերդ» կենտրոնական կոմիտեն իր գործունեությունը հիմնականում ուղղում է Ալեքսանդրապոլի կենտրոնական կոմիտեի հետ համատեղ զենքի ու զինամթերքի հայթայթման և դրանք սահմանամերձ գյուղեր փոխադրելու աշխատանքներին: Ալեքսանդրապոլում կրկին գործի գլուխ է կանգնում Պաղվալի Վաղոն, որը ներկարար Գաբրիելի աջակցությամբ նոր կապեր է ստեղծում ռուսական զորակայանի՝ հայ զինվորների ու սպայի հետ և պայմանավորվում նրանց հերթապահության ժամանակ ռուսական զինապահեստներից փամփուշտ հանել²: Ամմիջապես գործի են լծվում դոնադմանցի Մարտիկը, Թադեոս վարժապետը, Արամայիս Ազնավուրյանը, Մորուք Կարոն, որ 1896 թ. վերջին եկել էր Ալեքսանդրապոլ, Պաղվալի Վաղոն, ներկարար Գաբրիելը: «Մէկ ամբողջ շաբաթ օրական 4-5 ֆուրգոն փամփուշտ փոխադրեցինք նախ Դաւարլու, Դոնադման, ապա՝ Բայանտուր, Բաշ-Շորագետալ»³, - հիշում է Ա. Ազնավուրյանը: Այստեղից զենքը փոխադրվում էր երեք գծով՝ 1. Նամգաշետրակ-Քյադիկլար-Բերնա, 2. Թադուքյանդ-Բայրուխտար-Ջուլտ, 3. Արագի գյուղ-Բուլանուխ-Գորխանա-Բերնա⁴: Փոխադրվածները մոտ 500.000 «բերդանկա» հրացանի փամփուշտներ էին: Ջինապահեստից փամփուշտները դուրս էին բերում տեղի հայ զինվորները հայ սպայի գլխավորությամբ: «Գործը այնքան լաւ էր կազմակերպուած, որ զինուորական իշխանութիւնը ոչինչ չիմացաւ: Մենք այդ փամփուշտները հետագային Կ. կոմիտէի հրահանգի համաձայն սկսեցինք փոխադրել զանազան ուղղութիւններով դէպի Բերնա գիւղը, այնտեղից էլ Հոխվերան եւ Շահթեւան, որպէսզի Տաճկաստան անցնող խմբերը հաւաքուէին այդտեղ, զինուէին եւ ապա նոր անցնէին Երկիր»⁵, - հիշում է Ա. Ազնավուրյանը: Ջենքի փոխադրման աշխատանքներին մեծ օգնություն էին ցույց տալիս բայանդուրցի Տեր-Եղիան, բաշշորագյալցի Տեր-Համազասպը և իր եղբայր Հմայակը, Գլավնի Վարդանը, Թորգոմ Տեր-Սահակյանը, ճավեցի Միսակը, Ալեքսան Բզնունին, Ռաֆայելը, Ներսես Հայրապետյանը և նրա որդիները, Հովհաննես Մուրադյանը իր եղբայրներով, բժիշկ Սարգիսը, Տեր-Թադեոսը, Վարոսը և ուրիշներ⁶: Ջենքի փոխադրման կապակցությամբ Ֆարիատը (Սարգիս Օհանջանյան) իր հուշերում գրում է. «Կարսի եւ Ալեքսանդրապոլի զեկուցումներից երեւում էր, որ այնտեղի ընկերները յանդգնութիւնն ու անձնագոհութիւնը հասցրել էին անասելի չափերի: Օրը ցերեկով՝ սայլակը քշում էին պետական զենքերի մթերանոցը, իրենց ուսերով շալակում էին փամփուշտներով լի արկղները, դարսում սայլակի մէջ եւ ազատ-համարձակ քշում տանում Հ. Յ. Դաշնակցութեան պահեստը...»¹:

Կարսի մարզում զենքի ու զինամթերքի փոխադրման գործում 1897-1899 թթ. իրենց ներդրումն ունեին սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան) և կիլիկեցի Ժի-

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս Ա. Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր, 1937, թիւ 1, էջ 138, տե՛ս նաև Փափագեան Վ., Իմ յուշերը, Ա. հատ., Պոսթըն, 1950, էջ 52:

³ Ա. Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր, 1937, թիւ 1, էջ 138:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Ա. Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր, 1937, թիւ 1, էջ 138:

⁶ Տե՛ս նույն տեղում:

¹ Օհանջանեան Ա., Իմ յիշատակարանը, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր-դեկտեմբեր, 1942, թիւ 6, էջ 53:

րայրը (Հաջի Կարապետ Միճյան): 1897 թ. նրանք գալիս են Կարս, ուր Մուրադը մտնում է ՀՅԴ շարքերը: Ժիրայրը ՀՅԴ-ին անդամակցել էր դեռևս Եգիպտոսում: Երկուսն էլ ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ զբաղվում են Ալեքսանդրապոլից Կարսի մարզի սահմանամերձ գյուղեր զենքի և զինամթերքի փոխադրմամբ: Ժիրայրը «պարբերաբար երեւում էր Ալեքսանդրապոլում, երբեմն փախնած ձիով, իսկ աւելի յաճախ՝ մալականի ֆուրգոնով: Նա իբր Սարիղամիշում առեւտրի տէր՝ բազմաթիւ արկղներ կիտում էր ֆուրգոնի մէջ, երկու շիշ օղի դնում կողքին եւ մալականի հետ... վերադառնում: Այդ արկղները ռազմամթերքով լեցւած արկղներ էին: Իսկ երբեմն գալիս էր գիւղական սայլի վրայ նստած գեղջուկի հագուստով եւ... քաղաքից տանում էր մանր մունր անմեղ բաներ, իսկ ռազմամթերքը այս դէպքում պահած էր սայլի մէջ շինւած յատուկ գաղտնի պահարանում, - վերհիշում է ՀՅԴ Ալեքսանդրապոլի կենտրոնական կոմիտեի անդամ Վահան Փափագյանը: – Հետագայում աւելի յաճախ Մուրատն էր երեւում: Նա ընդհանրապէս սիրում էր փախնած ձիերով գալ՝ երբեմն 3-4 ձիով: Փախններից գարիի ցօղերի մեծ մասը դուրս էր հանում, նրանց փոխարէն հրացաններ դասաւորում, նորից կարում եւ ապա էժանագին իրերով բեռնաւորւած վերադառնում էր. կամ շատ անգամ Կարսի ու Սարիղամիշի վաճառականների համար վարձով ապրանք էր տանում»¹:

Այս ճանապարհով ժիրայրն ու Մուրադը 2 տարի շարունակ զենք ու զինամթերք էին փոխադրում դեպի Կարսի մարզի սահմանամերձ գյուղերը: Մուրադը երբեմն դիմում էր զենքի փոխադրման այլ միջոցների: Օրինակ, իբր համեստ մշակ մեջքով, գարու անվան տակ, զենք էր փոխադրում Կարսի ու ռուսական Բասենի գյուղերը, երբեմն էլ՝ սահմանից այն կողմ: Մ. Վարանդյանը վկայում է, որ երբ Մուրադը իմացավ, որ Երկիր զենք փոխադրելու համար խումբ է պատրաստվում. «Կը միանայ անոր եւ ինքն ալ հրացաններ շալակած, կ'անցնի սահմանը: Կ'երթան մինչեւ Գոմաձոր: Այնտեղէն ուրիշ խումբ մը պիտի փոխադրէր զենքերը Սասուն»²: Մուրադը ցանկանում է միանալ վերջինիս՝ Սասուն անցնելու համար, բայց, Կարսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեն. «հաշվի առնելով Մուրադի կազմակերպչական հիանալի կարողությունները, ժողովրդի հետ վարվեցողության հրաշալի շնորհները, նրան օգտագործում է Կարսի շրջանում զենք հայթայթելու և մարտական խմբեր կազմակերպելու՝ չափազանց դժվարին ու պատասխանատու գործում»³: Շուտով ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեն Մուրադի տնօրինությանն է հանձնում ՀՅԴ զինապահեստները:

Որոշ ժամանակով զենքի փոխադրման գործին իր մասնակցությունն է բերում նաև ճարտարը (Հակոբ Վարդանյան), որը 1897 թ. Աղբյուր Սերոբի հանձնարարությամբ Ախլաթից Կարս էր անցել այստեղից զենք ու զինամթերք փոխադրելու նպատակով: ճարտարն այդ գործը իրականացնում է անաղմուկ ու աննկատելի: «Ես ու իմ ընկերները, - հիշում է Ա. Ազնավուրյանը, - որ երկար ժամանակ մասնագետներ էինք դարձել այդ գործի մէջ, անկեղծօրէն նախանձում էինք նրա ունակութեան. ոչ ոք չգիտէր ու չէր կասկածում, թէ մա զենքերի փոխադրութեամբ է զբաղւում»¹: Ձենքի

¹ «Դրօշակ», օրգան Հ. Յ. Դաշնակցութեան, Փարիզ, յունւար, 1932, թիւ 1, նաև Փափագեան Վ., Իմ յուշերը, Ա. հատ., էջ 51-52:

² Վարանդեան Մ., Մուրատ (Սեբաստացի ռազմիկին կեանքն ու գործը), Պոսթըն, 1931, էջ 50:

³ Գևորգյան Հ., Սեբաստացի Մուրադ, Երևան, 2003, էջ 12:

¹ Ա. Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, փետրուար, 1938, թիւ 4, էջ 158:

փոխադրման աշխատանքներին ճարտարի հետ միասին մասնակցում է նաև Բիթլիսցի Մուշեղը, որին հաջողվում է մեծ քանակությամբ ռազմամթերք փոխադրել Ալեքսանդրապոլից Կաղզվան¹:

ՀՀԴ Կարսի «Ջրաբերդ» կենտրոնական կոմիտեին հաջողվում է 1897-1899 թթ. ընթացքում մեծ քանակությամբ զենք ու զինամթերք փոխադրել սահմանամերձ գյուղեր: Այստեղից, հիմնականում Երկրից եկած զինատար խմբերի միջոցով, այդ զենքն ու զինամթերքը փոխադրվում էր Երկրի տարբեր վայրեր՝ Վան, Ախլաթ, Մուշ, Սասուն և այլուր: Այս զինատար խմբերի մեջ իր թվակազմով ու Երկիր փոխադրած զենքի ու զինամթերքի քանակով աննախադեպ էր ճարտարի 1897 թ. խումբը: 66 (ըստ այլ տվյալների՝ 77) հոգանոց այդ խումբը զինվելով Կարսում, 1897 թ. աշնանը Ա. Ազնավուրյանի գծած երթուղիով Չիչաքյուլի Բագ-Թափա ճանապարհով անցնում է Ալաշկերտի Խաչլու գյուղը, որից հետո, շարունակելով ճանապարհը, հասնում է Խլաթ (Ախլաթ) և զենքերն ու փամփուշտները հանձնում Նեմրուք սարի վրա գտնվող Աղբյուր Սերոբին²: Դրան հակառակ, անհաջող վախճան է ունենում ճարտարի ու Բիթլիսցի Մուշեղի գլխավորած 1898 թ. զինատար խումբը:

Այստեղ պետք է նշել, որ թեև ՀՀԴ-ն մեծ տեղ էր հատկացնում Երկիր զենքի փոխադրման գործին, սակայն ի զորու չէր զինելու զենք կրելու ունակ ողջ արևմտահայությանը: Այս առթիվ ՀՀԴ 1895 թ. ռայոնական ժողովի արձանագրության մեջ կարդում ենք. «Հեռու լինելով այն կարծիքից, թե ընկերուհիները (Հ. Յ. Դաշնակցությունը – Կ. Հ.) կարող է զինել ամբողջ ժողովուրդը, նոյնիսկ նրա մեկ տասներորդ մասը՝ ժողովը գտնում է՝ 1. Ներկայ պայմաններում շատ դժուար է տեղացիների համար զենք գնել մոլեռանդ մահմետականներից, 2. Շատ անգամ գործին նուիրուած մարդիկ աղքատ լինելով՝ անկարող են ձեռք գցել կռուելու պարագաներ»³: Ելնելով այս պարագաներից՝ ժողովը գտնում է, որ ՀՀԴ-ն պետք է՝ 1. Իր միջոցներով զինի հեղափոխական խմբերին, որով «օժանդակ հանդիսանալով զենք տարածելուն՝ դրանով մեծ զարկ կը տայ նրան, որ ժողովուրդը ինքը կը ձգտի զինուել», 2. Երկրում հեղափոխական գործը առաջ տանողները «պիտի ձգտին ինչքան կարելի է զենքը ձրի չբաժանել եւ տալ գործին շատ մօտ մարդկանց», 3. Ձենք ձեռք բերելը վստահել ամեն մի գործող խմբի, որը «հետամուտ կը լինի թէկուզ քիչ, բայց լաւ զենքեր գնելու ձեռնհաս եւ փորձուած մարդկանց միջոցով»⁴:

Այսպիսով, ՀՀԴ-ն Երկիր զենք փոխադրելուն մեծ տեղ հատկացնելով հանդերձ, խիստ կարևորում էր, որ արևմտահայությունը նաև սեփական միջոցներով զենք ձեռք բերի, ինչը կարևոր ներդրում կլիներ վերջինիս զինման գործում:

Նշենք, որ «Ջրաբերդ» կենտրոնական կոմիտեն իր ամենամսյա եկամուտների 80 %-ը ծախսում էր զենք ու զինամթերք ձեռք բերելու համար: Ռուսական բանակում ծառայող և իրենց դաշնակցական համարող հայ զինվորները «իրենց նիւթական պարտականութիւնը պէտք է կատարէին փամփուշտ եւ զենք բերելով, այսինքն՝ գո-

¹ Տե՛ս «Յեղափոխական ալպոմ (ազատագրական պայքարի յուշամատեն)», խմբ. Աւօ, հատ. 6, Պէյրոս, 1965, էջ 140:

² Տե՛ս Ա. Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, փետրուար, 1938, թիւ 4, էջ 158, տե՛ս նաև Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրոս, 1957, էջ 599, տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», 2004, թիվ 2, էջ 69–70, տե՛ս նաև Ռուբէն, նշվ. աշխ., Գ. հատ., էջ 163, տե՛ս նաև «Յեղափոխական ալպոմ», հատ. 9, Թեհրան, 1972, էջ 88:

³ Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր...), խմբ. Հր. Տասնապետեանի, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրոս, Բ. հատ., բ. տպագր., 1985, էջ 20:

⁴ Նույն տեղում:

ղանալով պետութենէն»⁵: Միաժամանակ զենք էր գնվում ռուս զինվորներից, որոնք զինետներում այն գաղտնի վաճառում էին ՀՅԴ կոմիտեների անդամներին: Վերջիններս ստացած զենքն անմիջապէս զինետան հետևի դռնից դուրս էին հանում և տալիս իրենց սպասող կառապանին, որն էլ իր հերթին որոշ ժամանակ անց այն փոխանցում էր մէկ այլ կառապանի և այդպէս շարունակ: Այս գործողությունը ամիսներ շարունակ կրկնվում էր: Նման ճանապարհով մեծ քանակությամբ զենք ու փամփուշտ է կուտակվում Բաշ Շիրակում: Դրանք Արամայիս Ազնավուրյանի մասնակցությամբ փոխադրվում են Փերվալի-Բաշ-Քյադիկլար-Բուլանուխ-Ղարաղալա, ուր և տեղավորվում է զինամթերքի ամբողջ պարունակությունը⁶:

1902-1904 թթ. Կարսի մարզում զենքի ու զինամթերքի ձեռք բերման գործում կիրառվում է նաև տեղում դիմամիտ, ձեռնառումը պատրաստելու մեթոդը: ՀՅԴ գործիչներից Վարդան Տոնոյանի Կարսում գտնվող տունը վերածվում է զենքի ու զինամթերքի պատրաստման արհեստանոցի: ՀՅԴ գործիչների մի փոքրիկ խումբ Իսաջան Առաքելյանի գլխավորությամբ ձեռնամուխ է լինում ռումբի ու դիմամիտի պատրաստմանը: Բայց մասնագետ-զինագործ չունենալը և այդ գործին լավ չտիրապետելը ճակատագրական է լինում խմբի անդամների համար: 1903 թ. օգոստոսի 29-ին երեկոյան ժամը 5-ին Կուբինսկի զնդի հետևում գտնվող բնակարանում տեղի ունեցած պայթյունի հետևանքով զոհվում են ՀՅԴ անդամներ Իսաջան Առաքելյանը, տանտերը՝ Վարդան Տոնոյանը, Պողոս Պողոսյանը, Հովհաննես Նահիկյանը և Ռոդոսթոցի Սարգիսը: «Տեսարանը սոսկալի էր, - հաղորդում է «Դրոշակ»-ը, - հինգ երիտասարդ դիակներ բոլորովին այլանդակած՝ պառկեցրած էին մերկ գետնի վրայ»⁷: «Մշակ» թերթի հաղորդման համաձայն. «Խուզարկութեան ժամանակ բնակարանում գտնուեցին 38 պղնձեա ռումբեր, պայթուցիկ սնդիկի երեք կապսիւլներ, բիկֆորտի ժապավեն, ժելատին եւ այլ պատկանելիքներ»⁸: Իսկ ըստ «Հայրենիք» շաբաթաթերթի. «Պայթիւնը տեղի ունեցած է Նահիկեանի՝ իր ձեռքի ռումբերը լեցնելու ատեն»⁹: Մինչդեռ անդրադառնալով այդ դեպքին՝ Ռուբենը գրում է. «Քլորատ տը փոթասի եւ շաքարի անզգոյշ խառնելէն պայթեր էին ռումբերը»¹⁰: Նա նշում է, որ «կարելի պիտի ըլլար խուսափիլ պայթիւնից, եթէ անոնց մէջ զոնէ մեկը մասնագէտ լինէր»¹¹: Ձոհերի թիվն ըստ «Մշակի»՝ 4-ն էր, ըստ «Դրոշակ»-ի՝ 5-ը: Ա. Ազնավուրյանը այս մասին գրում է. «Պայթիւնի զոհ զնացին Իսաջանը, Վարդանը, Ամերիկայից եկած Յովհ. Նահիրիկեանը եւ չորս ուրիշ ընկերներ»¹²:

Պայթյունը մեծ հուզում առաջացրեց Կարսի բնակչության շրջանում: «Ժողովուրդը խռնւած էր եւ յուզւած՝ անկարող բացատրելու այդ օտարօտի տեսարանը, նրա իմաստը, - գրում է «Դրոշակը», - ոստիկանութիւնը ամբողջ Կովկասը դղրդացրեց հեռագիրներով: Չգիտէին՝ կապել արդեօք դէպքը կատարող ցոյցերի հետ (նկատի ունի 1903 թ. հունիսի 12 -ի օրենքի ընդունումից հետո տեղի ունեցող բողոքի ելույթները - Կ. Հ.), թէ տաճկահայերի ազատագրական շարժման հետ»¹³: Դեպքի

⁵ Ռուբեն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 82:

⁶ Տես Ա. Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, 1938, թիւ 6, էջ 131:

⁷ «Դրոշակ», դեկտեմբեր, 1903, թիւ 10:

⁸ «Մշակ», քաղաքական-գրական ամենօրյա լրագիր, Թիֆլիս, սեպտեմբերի 4, 1903, թիւ 192:

⁹ «Հայրենիք», ազգային շաբաթաթերթ, Բոստոն, հոկտեմբերի 3, 1903, թիւ 221:

¹⁰ Ռուբեն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 149:

¹¹ Նույն տեղում:

¹² Ա. Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, 1938, թիւ 6, էջ 130:

¹³ «Դրոշակ», դեկտեմբեր, 1903, թիւ 10:

առնչությամբ ռուսական իշխանությունները հետապնդումներ ու խուզարկություններ են իրականացնում Կարսի մարզում: Հնարավոր ծախողումներից խուսափելու համար Կարսի Կ. կոմիտեի հանձնարարությամբ Ա. Ազնավուրյանը Բերնա գյուղում գտնվող զենքն ու զինամթերքը փոխադրում է մոտակա քարայրը¹:

1903-1904 թթ. Կարսի մարզում նոր խմբեր կազմավորելու և Երկիր ուղարկելու պայմաններում կրկին հրատապ է դառնում զենքի ու զինամթերքի ձեռք բերման խնդիրը: Որոշվում է կրկին գործի դնել Ալեքսանդրապոլի պետական զինապահեստը դատարկելու ավանդույթը: Այդ գործին լծվում են «մասնագիտացած» Պաղվալի Վաղոն, Արամայիս Ազնավուրյանը, Ուսուլ Խեչոն: Նրանց միանում են Սվազցի Բիծան (Հարություն), Հաջի Լևոնը, գյումրեցի Հակոբը, Աշիկը, մշեցի Սարոն և ուրիշներ, որոնք նոր էին վերադարձել Արևմտյան Հայաստանից²: Վաղոն ծանոթանում է Գյումրու զինապահեստի պահապան գնդապետի հետ: Վերջինս համաձայնում է 20.000 ռուբլու դիմաց պահեստները աննկատ թալանելու գործում օգնել Վաղոյին: Անմիջապես կազմվում է ծրագիր: Պայմանավորված օրը՝ 1904 թ. հունվարի 7-ին, գնդապետը քանդում է պահեստի դռան կնիքը: Վաղոն և երկու հայ զինվորներ զենքն ու զինամթերքը դուրս են բերում պահեստից, իսկ Բիծան 10 ընկերներով ու 4 կառքով դուրս բերված ավարը փոխադրում են քաղաքից դուրս և հանձնում իրենց սպասող դատարկ ձիակառքերին, որոնք էլ այն հանձնում են Հակոբ Չիլինգարյանի խմբին: Վերջինս, բաժանվելով մասերի, իրեն հանձնված զենքն ու զինամթերքը տեղավորում է Կարսի մարզի տարբեր գյուղերի ՀՅԴ զինապահեստներում³: Գործողությունը տևում է մոտ մեկ շաբաթ: Վաղոյի գլխավորած խմբին հաջողվում է Ալեքսանդրապոլի զինապահեստներից դուրս բերել «բերդանկա» մակնիշի հրացանի 437 արկղ փամփուշտ (503.389 հատ), փիպոտի տեսակի հրացանի փամփուշտի 30 արկղ (30.000 հատ), «սմիթ» և «վիստոնի» տեսակի ատրճանակի փամփուշտի 46 արկղ (66.240 հատ)⁴: Այս ամենից բացի զինապահեստից դուրս էին բերվել նաև 30.115 հատ տարբեր տեսակի փամփուշտներ իրենց կապսուլներով:

Ռազմամթերքի այս պաշարի դուրս բերումը, սակայն, աննկատ չի մնում: Բուշկով ազգանունով մի ռուս զինվոր 1904 թ. հունվարի 7-ին երեկոյան ժամը 9-ին Ալեքսանդրապոլի բերդ վերադառնալիս նկատում է «10-15 հայեր եւ անոնց քով ձեան վրայ ձեռքի սայլակներ եւ կուտված բան մը գետնի վրայ»⁵: Նա իր տեսածի մասին անմիջապես զեկուցում է ենթասպա Շամախյանցին: Բայց վերջինս այդ մասին հրամանատարությանը զեկուցում է միայն մեկ շաբաթ անց՝ հունվարի 13-ին: Անմիջապես սկսվում է հետաքննություն: Խուզարկություններ են կատարվում Ալեքսանդրապոլի գավառի և Կարսի մարզի գյուղերում: Կարսում ձերբակալվածների թիվն անցնում է 400-ից: Ոմանց աքսորում են Ռուսաստանի զանազան քաղաքներ⁶: Բայց գործործի բուն հեղինակներն արդեն լքել էին Կարսի մարզի ու Ալեքպոլի գավառի սահմանները: Պահեստի պահապան սպան պաշտոնի փոփոխություն էր կատարել ու փոխադրվել Ռուսաստան: Ալեքպոլի և Կարսի շրջաններից առժամանակ

¹ Տե՛ս Ա. Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, 1938, թիւ 6, էջ 130:

² Տե՛ս Մելքոնյան Ա., Ձավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 252:

³ Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 220-223:

⁴ Տե՛ս «Հայրենիք», ազգային շաբաթաթերթ, օգոստոսի 6, 1904, թիւ 265, տե՛ս նաև նույն տեղում, յունվարի 14, 1905, թիւ 288:

⁵ «Հայրենիք», ազգային շաբաթաթերթ, օգոստոսի 6, 1904, թիւ 265:

⁶ Տե՛ս «Դրօշակ», փետրուար, 1904, թիւ 2:

անհետացել էր Սվազգի Բիծան: Անհետացել էին նաև զինապահեստի մաքրագարդանան անմիջականորեն մասնակցած հայ զինվորները: Նրանցից Սուրենն ու Գրիշը անցել էին Սալմաստ և միացել Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր-Յովհաննիսյան) խմբին: Իսկ գործի անմիջական նախաձեռնող Պաղվալի Վաղոն էլ շուտով միանում է Թորգոմի «Որսկան» խմբին և իր մահկանացուն կնքում Ջարդանիսի կռվում:

Ալեքսանդրապոլում Կովկասյան նահանգային պատերազմական ատյանը 1904 թ. հունիսի 20-ին քննում է նշված գործը և պարզում եղելությունը: Ասվածին հավելենք, որ 1904 թ. սեպտեմբերին Կարս քաղաքի մոտակա գյուղերից մեկի արտում մի ռուս զինվոր պատահաբար հայտնաբերում է 24 արկղ բերդան մակնիշի հրացանի փամփուշտ (27.000 հատ)¹: Ռուսական ոստիկանությունը հավանական է համարում, որ դրանք Ալեքսանդրապոլի զինապահեստից գողացված փամփուշտներից են և այս գործով ևս 3 հայ է ձերբակալում:

Ձեռքի ու զինամթերքի ձեռք բերումից ավելի կարևոր խնդիր էր դրանք անվտանգ երկիր փոխադրելու գործը: Ձինատար խմբերի միջոցով այդ խնդիրը լուծելու փորձերը իրենց չէին արդարացրել: Խմբերի մեծ մասը, բախվելով թուրք-քրդական ուժերի հետ, չէին կարողացել ապահովել անհրաժեշտ քանակությամբ զենք ու զինամթերքի փոխադրումը երկիր, իսկ «զենքերի մեծ մասը ոչնչացվել էր՝ ընկնելով քրդերի ձեռքը կամ կոտրատուելով խմբի կողմից»²: Այս հարցն առանձին քննարկման առարկա է դառնում 1903 թ. մայիսին գումարված ՅՅԴ Սարուստանի (Ռուսաստան) ռայոնական ժողովում: Այն որոշում է՝ 1. Մինչև այժմ ձեռք առնված միջոցներին ավելացնել նոր զինակիր խմբեր, 2. Հիմնել կանոնավոր կայաններ, 3. Ունենալ ձիավոր խմբեր զենք փոխադրելու համար³: Ժողովը անդրադառնում է նաև երկրում կենտրոնացման գործին և ելնելով նախորդ 10 տարիների փորձից, գտնում, որ «անհնարին է երկրում որեւէ կենտրոնացում առաջ բերել»⁴:

Ձեռքի երկիր փոխադրման խնդրին հետագայում անդրադառնում է նաև ՅՅԴ III ընդհանուր ժողովը, որը հանձնարարում է ՅՅԴ «Ջրաբերդ»-ի (Կարս) և «Մրգաստան»-ի (Երևան) կենտրոնական կոմիտեներին «Ձիաւոր խմբով կամ որեւէ ուրիշ միջոցով Սասուն հասցնել ուժանակ, ռումբեր, հրացանի մասեր, բերդանի գիլզէներ, 50.000 մոսիցի փամփուշտ եւ բերդանի փամփուշտ կարելի եղածին չափ մեծ քանակութեամբ եւ այս ամբողջը ոչ ուշ, քան մայիսի կէսը...»⁵: Միաժամանակ ընդհանուր ժողովը հստակեցնելով Սասուն ապստամբությանը զուգահեռ ձեռնարկվելիք գործողությունների մասշտաբն ու տևողությունը՝ գտնում է, որ «ամեն մէկ խումբ բաղկացած ըլլայ ոչ աւելի, քան 30 հոգի: Բոլոր այդ ձեռնարկները պիտի դասաւորուին Սասնոյ կռուին տեւողութեան համեմատ եւ տեղի չպիտի ունենան միաժամանակ»⁶:

Այս խնդրին անդրադառնում է նաև 1904 թ. ապրիլի 5-12-ին Ալեքսանդրապոլում գումարված շրջանային ժողովը: Այն որոշում է. «փոխադրութիւնները կատարել 1.

¹ Տե՛ս «Հայրենիք», ազգային շաբաթաթերթ, հոկտեմբերի 15, 1904, թիւ 275:

² Արամի յուշերը, Արամը (մահուան յիսնամեակին առթիւ), Երևան, 1991, էջ 182:

³ Տե՛ս Նիւթեր..., է. հատ., խմբ. Եր. Փամպուքեան, հրատ. Զ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, 2010, էջ 120:

⁴ Նույն տեղում, էջ 121:

⁵ Նիւթեր..., Բ. հատ., էջ 111:

⁶ Նույն տեղում:

ժողովրդի միջոցով՝ հանգրուանէ հանգրուան, 2. օտարների միջոցով՝ վճարով, 3. ապրանքների միջոցով, 4. ֆետայական խմբերով»¹:

1904 թ. ամռանը Կարսի մարզից Երկիր են անցնում Կայծակ Վաղարշակի (Վաղարշակ Բաղդասարյան) «Դժոխք», Յնչակյան Բաբկենի (Պողոս Գրիգորյան-Ավագյան) «Արծիվ» և Թորգոմի (Թունան Թումյանց) «Որսկան» խմբերը, որոնք կռվի բռնվելով ռուս-թուրքական սահմանապահ ջոկատների և քրդական աշիրեթների հետ՝ մեծմասամբ ջախջախվում են:

Այս խմբերի ջախջախումից հետո՝ 1904 թ. վերջից ՅՅԴ-ն զենքի ու զինամթերքի փոխադրման գործում ակտիվորեն կիրառել է քրդերին օգտագործելու նախորդ տարիներից ձեռք բերած փորձը: Կարսից ու Կաղզվանից դեպի Վան, Ախլաթ ու Սասուն զենքի փոխադրման գործում գնալով մեծանուն է քուրդ շալակավորների պահանջարկը: Նրանք որոշակի վարձատրությամբ զենք ու զինամթերքը հասցնում էին նըշված վայրը²: Անշուշտ, նաև լինում էին դեպքեր, երբ քրդերն իրենց հանձնված բեռը տանում էին իրենց աշիրեթները կամ մտնելով ոստիկանատուն՝ մատնում էին պատվիրատու հայ գործիչներին: Բայց մեծամասամբ քրդերի համար ձեռնտու էր բարեկամանալ հայերի հետ՝ համոզված լինելով, որ նրանց պայքարն իրենց դեմ չէ, այլ թուրքական կառավարության:

1905-1907 թթ. Կարսի մարզից Երկիր զենք ու զինամթերք փոխադրելու գործը շարունակվում է իրականացվել վերը թվարկված մեթոդներով: Առավել նախընտրելի էր շալակով փոխադրումը, որը թեև անհամեմատ թանկ էր նստում, բայց ավելի հուսալի էր և համեմատաբար քիչ զոհեր էր պահանջում: Կովկասից, հատկապես Կարսի մարզից Երկիր զենք փոխադրելու հաջորդ մեթոդը Օրյոլի և Տուլայի զինագործարաններից զենքի կամ զենքի առանձին մասերի գնումն ու Երկիր ուղարկելն էր: Այնտեղ ստեղծվում էին հատուկ արհեստանոցներ, որոնցում հայ զինագործները գաղտնի պայմաններում հավաքում էին հրացաններ, պատրաստում էին զենքի որոշ մասեր և միաժամանակ զբաղվում զենքերի վերանորոգման աշխատանքներով: Ձենքի փոխադրման հարմար միջոց էր համարվում, այսպես կոչված, «ծծման» մեթոդը, երբ զենք ու զինամթերքը Երկիր էր փոխադրվում գյուղից գյուղ՝ տարբեր շալակավորների միջոցով: Այս մեթոդով 1905-1907 թթ. հաջողվում է Կարս-Բյուրակնի գծով որոշակի քանակությամբ զենք փոխադրել Դուրան-Բարձրավանդակ (Տարոն-Սասունի շրջան) և Վան-Վասպուրական: ՅՅԴ IV ընդհանուր ժողովին ուղղված Դուրան Բարձրավանդակի 1906 թ. տեղեկագրում առաջարկվում է. «Ջրաբերդում կենտրոնացնել մեզ յատկացուած ուժերը, նշանակել մի ընկեր յատկապես այդ գործով զբաղուող, որը բաց անէ գծեր Բասենի եւ լեռնային գծերով, երկու կամ երեք տեղով. պէտք է նշանակել մի ընկեր Բասեն-Խնուս որպէս ապրանք ընդունող եւ գծերին հըսկող. պէտք է ունենալ այժմեան եղածի պէս 4-5 հոգուց բաղկացած չորս կամ հինգ խմբեր, որոնցից մինը լինի Ջրաբերդ, միւսը Բիւրակն, իսկ Բիւրակնից այստեղ մենք կը փոխադրենք նոյն ձեւով»³: Այս գործի արագացման համար անհրաժեշտ է համարվում նաև մեկ այլ գործիչ նշանակել Ապահունիքում՝ «այնտեղի գծերը Ալաշկերտով բաց անելու համար»⁴: Անդրադառնալով վերը նշված խնդիրներին՝ ՅՅԴ Արևել-

¹ Նույն տեղում, էջ 195:

² Տես Սիմոնյան Յր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, Երևան, 2003, էջ 465:

³ Նիթեր..., Դ. հատ., խմբ. Յր. Տասնապետեանի, Պէյրուս, 1982, էջ 61:

⁴ Նիթեր..., Դ. հատ., էջ 61:

յան բյուրոյին ուղղված 1906 թ. սեպտեմբերի 2-ի թվակիր նամակում Ռուբեն Տեր-Մինասյանն առաջարկում է Կարս-Բասեն-Խնուս գիծը բացելու պարտականությունը հանձնարարել Սեբաստացի Մուրադին: «Խնդրում ենք նրան հանէք այդ աննպատակ կռիւներից (նկատի ունի հայ-թաթարական բախումները – Կ. Յ.) եւ դնէք Ջրաբերդի մեր գործերի վրայ, առանց նրան էլ համաշահարիների (թաթարների – Կ. Յ.) դէմ եղած գործը առաջ կ'երթայ, իսկ նրա սպանուելը ցաւ է Երկրի համար»¹, - եզրափակում է Ռուբենը:

Չարկ է նշել, որ հակառակ դժվարություններին՝ Յ. Յ. Դաշնակցությանը հաջողվում է 1905-1908 թթ. ավելի շատ զենք ու զինամթերք փոխադրել Երկիր, քան նախորդ 15 տարվա ընթացքում: Այդ մասին Ռուբենը գրում է. «1905-1908 թթ. հայ ժողովրդի գլխովին զինման շրջանն է: Ան իր սպառազինունով սկսած էր նոյնիսկ գերազանցել քիւրտերը»²: Այս զենքերի մեծ մասը կենտրոնացվում է Վասպուրականում, սակայն ցավով պետք է նշել, որ դրանց մեծ մասը դիերցի Դավոյի մատնության հետևանքով 1908 թ. հունվարին անցնում է թուրքական իշխանությունների ձեռքը:

1905-1908 թթ. զենք ու զինամթերքի ձեռք բերման ու Երկիր փոխադրման գործում արձանագրված հաջողությունն էապես պայմանավորված էր նաև 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների շրջանում Յ. Յ. Դաշնակցության ունեցած ֆինանսական անհամեմատ բարվոք վիճակով: Մի կողմից՝ կովկասահայ մեծահարուստների մի մասի կամավոր նվիրատվությունների, մյուս կողմից՝ «Փոթորիկ» խմբի Յուսիսային Կովկասում, Մոսկվայում և այլուր կատարած բռնի հանգանակությունների շնորհիվ ՅՅԴ-ն տնօրինում էր ֆինանսական խոշոր միջոցների, որոնք օգտագործվեցին կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Այդ շրջանում Կովկասում ՅՅԴ-ն տնօրինում էր զենք ու զինամթերքի հսկայական ռեսուրսների: Չայ-թաթարական բախումների ավարտից հետո զենքի կուտակված պաշարների մի մասը տարբեր ճանապարհներով, այդ թվում Կարսի մարզի տարածքով, 1906-1908 թթ. փոխադրվեց Երկիր:

Ամփոփելով 1892-1908 թթ. ընթացքում Կարսի ու Ալեքսանդրապոլի ՅՅԴ կենտրոնական կոմիտեների գործունեությունը զենքի ու զինամթերքի ձեռք բերման ու Երկիր փոխադրելու առումով՝ գալիս ենք հետևյալ եզրակացության. 1. Ձենքի ու զինամթերքի ձեռք բերման հիմնական եղանակները ռուս զինվորներից ու Տուլայի զինագործարանից անլեգալ ճանապարհով զենքի գնումն ու Ալեքսանդրապոլի ռուսական զինապահեստի պարբերաբար դատարկումներն էին, 2. Կարսի մարզում ու Ալեքսանդրապոլի գավառում Յ. Յ. Դաշնակցության ձեռք բերած զենքի ու զինամթերքի ողջ պաշարը փոխադրվում ու կենտրոնացվում էր Կարսի մարզի սահմանամերձ հայաբնակ գյուղերի ՅՅԴ գաղտնի զինապահեստներում, 3. Արևմտյան Չայաստանից Կարս անցած արևմտահայ գործիչների կամ տեղական ուժերի միջոցով Կարսի մարզի սահմանամերձ գյուղերից զենքն ու զինամթերքը փոխադրվում էր Երկիր, 4. 1890-ական թթ. Երկիր զենքի փոխադրման հիմնական միջոց էր համարվում զինատար խմբերի միջոցով կատարվող փոխադրությունը, որի արդյունավետությունը խիստ ցածր էր ճանապարհին թուրք-քրդական ուժերի հետ ունեցած բախումների պատճառով, 5. Առավել արդյունավետ էր հայ և քուրդ շալակավորների միջոցով

¹ Նույն տեղում, էջ 73:

² Ռուբեն, նշվ. աշխ., Բ. հատ., Երեւան, 1990, էջ 160:

զենքի ու զինամթերքի փոխադրումը, որի կիրառումը մեծ չափեր ընդունեց հատկապես XX դարի սկզբին:

Акопян Карает, Деятельность центральных комитетов А. Р. Дашнакцутюн Карса и Александрополя в деле добывания оружия и боеприпасов и их транспортировки в Западную Армению - В 1892-1908 гг. основными способами добывания оружия и боеприпасов были покупка нелегальным путем оружия у русских солдат и из Тульского оружейного завода, и периодическое опустошение Александропольского оружейного склада. Весь запас приобретенного таким путём оружия и боеприпасов транспортируют и сосредоточивают в тайных оружейных складах А. Р. Дашнакцутюн, которые находятся в населенных армянами пограничных деревнях Карсской области. Затем все это тайно перевозят в Западную Армению (Басен, Хнус, Ван, Сасун, Муш) посредством вооруженных групп или носильщиков армян и курдов. Транспортировка оружия и боеприпасов в Западную Армению достигает больших размеров особенно в 1905-1908 гг.

Hakobyan Karapet, The actions of the ARF Central Committees of Kars and Alexandrapol for obtaining armaments and transferring them to the country in 1892-1908. - In 1892-1908 the main variants of getting armaments from Russian soldiers and from the armoury of Tula were the illegal buying of arms and the periodical emptying of the Russian arms store in Alexandrapol. All the military supplies obtained in this way were transferred and centred in the ARF secret arm stores of Armenian-populated border villages of Kars Region. Then all that was secretly transferred to Western Armenia (Basen, Khnus, Van, Sassun, Moush, ...) by arm-carrying groups or by Armenian or Kurd carriers. The transferring of the armaments to the Western Armenia grew especially in 1905-1908.

